



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ



Ծրագիրը
ֆինանսավորվել է
Եվրոպական
միության կողմից

Ծրագիրը
համաֆինանսավորվել է
ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի
կողմից

Իրականացնող՝
Իրավաբանների
հայկական
ասոցիացիա

Գործընկեր՝
Ինֆորմացիայի
ազատության
կենտրոն

Իրականացնող՝
«Բարեփոխում և
զարգացում»
իրավապաշտպան
շփ

Գործընկեր՝
Գյումրու
«Կանթեղ»
մանկապատանե
կան շփ

Զ Ե Կ ՈՒ Յ Ց

*«Շիրակի և Արագածոտնի մարզերի
հաշմանդամություն ունեցող կանանց
իրավունքների պաշտպանությունը, որպես
հակակոռուպցիոն դիմադրողականություն
ստորապահական գործընթացներում
մոնիթորինգի» արդյունքների*

ք. Գյումրի

2016թ.

Զ Ե Կ ՈՒ Յ Ց

«Շիրակի և Արագածոտնի մարզերի հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանությունը, որպես հակակոռուպցիոն դիմադրողականություն առողջապահական գործընթացներում մոնիթորինգ» ծրագիրը իրականացրել է «Բարեփոխում և զարգացում» իրավապաշտպան ՀԿ-ը՝ իր գործընկեր՝ Գյումրու «Կանթեդ» մանկապատանեկան ՀԿ-ի հետ համատեղ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում:

Ծրագրի բյուջեն կազմել է 1,489,200 ՀՀ դրամ: Ծրագրի տևողությունն է՝ 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև հուլիսի 31-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և համաֆինանսավորվում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից:

Նախապատմություն


ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան 2006թ. դեկտեմբերի 13-ին ընդունել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան: Կոնվենցիան երաշխավորում է, որ մարդու իրավունքները հարգվեն նաև հաշմանդամություն ունեցող անձանց պարագայում. «աջակցել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մարդկային իրավունքների ու հիմնարար ազատությունների լիակատար ու հավասար իրացումը, ինչպես նաև հարգելից վերաբերմունքը նրանց արժանապատվության նկատմամբ»:

Սույն կոնվենցիան Հայաստանը ստորագրել է 2007թ. մարտի 30-ին, որն ուժի մեջ է մտել 2010թ. հոկտեմբերի 22-ին: Հաստատվելուց հետո ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն դարձել է ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս:

Հաշմանդամություն ունեցող անձ է համարվում այն անձը, որն առողջության խաթարման պատճառով կենսագործունեության սահմանափակման հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն: Վերջիններս ունեն ՀՀ Սահմանադրության և օրենքներով սահմանված կարգով նույն իրավունքները, ազատությունները ու պարտականությունները, ինչպես այլ անձինք:


Ներկայումս Հայաստանում գրանցված են 197000 հաշմանդամներ, որոնց 47 տոկոսը կանայք են:

Շիրակի և Արագածոտնի մարզերում իգական սեռի հաշմանդամություն ունեցող անձանց քանակը ըստ հաշմանդամության տարիքային խմբերի 01.06.2016թ. դրությամբ կազմում է՝



Շիրակի մարզում 18-30 տարեկան 1-ին խմբի հաշմանդամների թիվը 39, 2-րդ խմբի՝ 123 և 3-րդ խմբի՝ 215:

31-50 տարեկան 1-ին խմբի հաշմանդամների թիվը 82, 2-րդ խմբի՝ 533 և 3-րդ խմբի՝ 1261: 51 և ավելի տարիքային 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց թիվը 254, 2-րդ խմբի՝ 2861 և 3-րդ խմբի՝ 4261: Ընդամենը 9629 իգական սեռի հաշմանդամություն ունեցող անձինք, որոնցից 18-30 տարեկան հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմում է 377, 31-50 տարեկան՝ 1876, իսկ 51 և ավելի տարիքային՝ 7376:



Արագածոտնի մարզում 18-30 տարեկան 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց թիվը 28, 2-րդ խմբի՝ 55 և 3-րդ խմբի՝ 83:

31-50 տարեկան 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց թիվը 46, 2-րդ խմբի՝ 285 և 3-րդ խմբի՝ 458: 51 և ավելի տարիքային 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց թիվը 108, 2-րդ խմբի՝ 1273 և 3-րդ խմբի՝ 1561: Ընդամենը 3897 իգական սեռի հաշմանդամներ, որոնցից 18-30 տարեկան հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմում է 166, 31-50 տարեկան՝ 789, իսկ 51 և ավելի տարիքային՝ 2942:

Հաշմանդամություն ունեցող կանայք հասարակության ամենախոցելի խումբն է: Թե՛ որպես կին, և թե՛ որպես հաշմանդամություն ունեցող անձ նրանք ենթարկվում են կրկնակի խտրականության: Մշտապես բախվում են սոցիալական խոչընդոտների, նրանց վերարտադրողական

առողջության ընտանիք ունենալու իրավունքները մեծ մասամբ չեն իրագործվում:

Գաղտնիք չէ, որ առողջապահության համակարգում դեռևս գոյություն ունեն տասնամյակների ընթացքում արմատավորված կոռուպցիոն ռիսկեր և խորացված անցանկալի երևույթներ: Առանց այն էլ ծանր սոցիալական պայմաններում գտնվող անօգնական, ինքն իրեն հասարակության անլիարժեք անդամ համարող հաշմանդամ կինը առողջապահական գործընթացներում մշտապես բախվում է ֆիզիկական և սոցիալական խոչընդոտների, կաշառակերության, դրամաշորթության, հովանավորչության բժշկական անտարբերության պատճառով:

«Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշմանդամ կանանց երաշխավորվում է պետական բյուջեի հաշվին որակյալ անվճար բժշկական օգնություն բուժ հիմնարկներում:

1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք ապահովվում են անվճար դեղորայքով, իսկ 3-րդ խմբին՝ 50 տոկոս զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններում դեղորայք ստանալու իրավունքից:

Անվճար դեղորայք ստանալը հաշմանդամ կանանց համար մեծ մասամբ դարձել է դժվար հաղթահարելի

գործընթաց. մի քանի անգամ դիմելուց հետո պարզվում է, որ համապատասխան դեղորայքը արդեն սպառվել է:

Շիրակի մարզում համատարած երևույթ է, երբ նման դեպքերում բուժող բժիշկը «մտերմաբար» խորհուրդ է տալիս դեղորայքը գնել իր կողմից ուղղորդված դեղատնից, հետագայում պարզվում է, որ դա նրանց մասնավոր դեղատունն է կամ իր ծանոթ մտերիմ ազգականին: Բուժ. հաստատություններում ավելորդ քաշքշուկներից, բուժ աշխատողների ոչ պատշաճ վերաբերմունքից խուսափելու համար հաշմանդամություն ունեցող կինը գերադասում է ոչ թե օգտվել անվճար բժշկական ծառայությունից, այլ չտեսնելով իր սեփական խնդիրների լուծման այլընտրանքային ճանապարհը, դիմում է կոռուպցիոն ռիսկի՝ ստիպված կատարում է վճարում իրեն հասանելի դեղորայքի և ծառայության դիմաց, գտնվելով առանց այն էլ սոցիալական ծանր վիճակում: Կոռուպցիան առողջապահության բնագավառում շատ ավելի վտանգավոր է, քանի որ այստեղ խոսքը մարդու առողջության և կյանքին է վերաբերվում:

Շիրակի և Արագածոտնի մարզերում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց կանանց առողջարանային վերականգնողական բուժումը նույնպես դժվարությամբ է ապահովվում պետ պատվեր իրականացնող բժշկական հաստատություններում /Ջերմուկ, Գանձաղբյուր և Վանաձոր/:

Քանի որ առողջարանային բուժումը կատարվում է հերթափոխային եղանակով, տարիներ շարունակ հերթագրված հաշմանդամություն ունեցող անձանց կանայք երկար սպասելուց հետո նույնիսկ, չեն օգտվում նշված արտոնությունից:

Կոռուպցիոն ռիսկեր են պարունակում նաև հաշմանդամություն ունեցող կանանց համար պրոտեզա-օրթոպետիկ և վերականգնողական պարագաների, գործիքային հետազոտությունների մատչելությունը, քանի որ այսօրինակ անվճար բժշկական ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ են ֆինանսական ծախսեր:

Ուսումնասիրության արդյունքներով արձանագրվել էին կազմակերպչական և որոշակի բնույթի թերություններ և կոռուպցիոն ռիսկեր, այդ թվում առողջարանային բուժման ոլորտում:

ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հետազոտության նպատակն է գնահատել կոռուպցիայի մակարդակը Շիրակի և Արագածոտնի մարզերի առողջապահական գործընթացներում հնարավոր կոռուցիոն մարտահրավերները, կոռուպցիա ծնող պատճառները, դրանց

հետևանքները, ինչպես նաև կանխարգել առաջացման հիմնական խոչընդոտները:

Հետազոտության համար ընտրվել և կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը.

1. Թեժ գծի միջոցով խորհրդատվության տրամադրում և տեղեկության հավաքագրում կազմակերպության գրասենյակից:
2. Դիտարկումներ առողջարաններում և տեղեկության հավաքագրում:
3. Ստացված տեղեկությունների որակական գնահատում և վերլուծություն:



ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հարցվածների ընդհանուր թիվը 100՝ իգական սեռի 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող քաղաքացիներ:

Ուսումնասիրության արդյունքում մոնիթորինգ է իրականացվել Շիրակի մարզի թվով 2 պոլիկլինիկաներում և Արագածոտնի մարզի թվով 2 բուժ. հաստատություններում, որոնց արդյունքում պարզ է դարձել, որ հաշմանդամություն ունեցող կանանց մեծ մասը չի օգտվում պետական պատվերի շրջանակներում տրամադրված դեղորայքներից, քանի որ բացակայում է որակի և ազդեցության գործոնը, ինչպես նաև շատ դեպքերում պատճառաբանվում է դեղորայքի բացակայությունը /լիմիտի/ պակասի պատճառով:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հարցված հաշմանդամություն ունեցող կանանց գերակշիռ մասը տեղյակ չէ վերջիններիս պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, տեխնիկական միջոցներով ապահովման և բժշկասոցիալական վերականգնողական ծառայությունների մասին:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ թվով երեք առողջարաններում պոտական պատվերի շրջանակներում 12-օրյա տևողությամբ ուղեգրված հաշմանդամություն ունեցող անձանց մեծ մասը հասանելիք օրերը կհստում է մեկ այլ ոչ հաշմանդամ անձի հետ, կամ իր փոխարեն բուժման է մեկնում մեկ այլ անձ ոչ իր ուղեգրով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ հաշմանդամություն ունեցող անձը այն անձն է, որն առողջության խաթարման պատճառով

կենսագործունեության սահմանափակման հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն և առողջապահական ոլորտում, որտեղ կոռուպցիոն երևույթները ակնհայտ են, ինչը բազմիցս արծարծվել է թե՛ կառավարական մակարդակում, և թե՛ շահառուների ու ՀԿ-ների շրջանում, որի վառ օրինակներից մեկը դարձավ /կեղծ ուղեգրերի տրամադրումը և պետական բյուջեից գումարի մսխումը/: Պատասխանատվության առումով առկա է պատկան մարմինների որոշակի անգործություն և անուշադրություն: Ոլորտում տիրում է անպատժելիության մթնոլորտ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բարձրացնել թափանցիկությունը հաշմանդամության ճանաչման գործընթացում, ստեղծել հանրային վերահսկողության գործուն մեխանիզմներ:
- Ստեղծել վերահսկողություն իրականացնող խումբ, պարպերաբար ուսումնասիրություն և այցելություններ կազմակերպելու համար:
- Թույլատրել համապատասխան ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին մասնակից դառնալու ուղեգրերի տրամադրման գործընթացում:

«Շիրակի և Արագածոտնի մարզերի հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանությունը, որպես հակակոռուպցիոն դիմադրողականություն առողջապահական գործընթացներում մոնիթորինգ» ծրագրի զեկույցը կազմել է հետևյալ աշխատանքային խումբը՝

- 1. Արմեն Գաբրիելյան – ծրագրի ղեկավար**
- 2. Յուդաբեր Ղազարյան – ծրագրի ղեկավարի օգնական**
- 3. Աննա Զուռնայան – թեժ գծի պատասխանատու**
- 4. Սամվել Վարդանյան – ծրագրի փորձագետ**
- 5. Սամվել Առաքելյան**
- 6. Վարդուհի Գաբրիելյան**
- 7. Հովհաննես Շահբազյան**

ՇՄ «Բարեփոխում և զարգացում» իրավապաշտպան ՀԿ
Գյումրու «Կանթեղ» Մանկապատանեկան ՀԿ
ՀՀ, ՇՄ, 3101, Գյումրի, Խրիմյան Հայրիկ փողոց 62/14
Հեռախոս՝ +374 60 737003, +374 77 077006, +37477903376



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ



Ծրագիրը
ֆինանսավորվել է
Եվրոպական
միության կողմից

Ծրագիրը
համաֆինանսավորվել է
ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի
կողմից

Իրականացնող՝
Իրավաբանների
հայկական
ասոցիացիա

Գործընկեր՝
Ինֆորմացիայի
ազատության
կենտրոն

Իրականացնող՝
«Բարեփոխում և
զարգացում»
իրավապաշտպան
ՀԿ

Գործընկեր՝
Գյումրու
«Կանթեդ»
մանկապատանե
կան ՀԿ

Սույն զեկույցը տպագրվել է «Շիրակի և Արագածոտնի մարզերի հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանությունը, որպես հակակոռուպցիոն դիմադրողականություն առողջապահական գործընթացներում մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում, որն իրականացրել է «Բարեփոխում և զարգացում» իրավապաշտպան ՀԿ-ը՝ իր գործընկեր Գյումրու «Կանթեդ» մանկապատանեկան ՀԿ-ի հետ համատեղ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից:

Զեկույցը վաճառքի ենթակա չէ: Զեկույցում ամփոփված մոտեցումները աշխատանքային խմբին են և կարող են չհամընկնել:

Եվրոպական միության, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունների տեսակետներին: